ՁԵՐ MEDI-CAL ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԸ՝ ՄԵԿ ՀԱՅԱՑՔՈՎ

Շնորհակալություն Medi-Cal Dental ծրագրի մաս կազմելու համար: Ձեր բերանի խոռոչի առողջության մասին հոգ տանելը ձեր ընդհանուր առողջության կարևոր մասն է: Ձեր ատամնաբուժական նպաստներից օգտվելու լավագույն եղանակներից մեկը մշտական ատամնաբույժ ընտրելն է: Մշտական ատամնաբույժը կարող է օգնել պահպանել ձեր ժպիտի առողջությունը և անհրաժեշտության դեպքում բուժօգնություն տրամադրել:

Ատամնաբույժ փնտրո՞ւմ եք

Ձեր մոտակայքում ատամնաբույժ գտնելու համար սկանավորեք QR կոդը կամ այցելեք bit.ly/ca-findadentist հասցեով:

Ձեր ատամնաբուժական նպաստները

Այս ուղեցույցում ներկայացված են Medi-Cal Dental ծրագրի միջոցով հասանելի ատամնաբուժական որոշ նպաստներ, ծառայություններ և աջակցություն:

Կանխարգելիչ ծառայություններ

Անվճար ստացեք կանխարգելիչ ատամնաբուժական խնամք, ներառյալ՝

- ատամնաբուժական զննումներ
- ատամների մաքրում
- ռենտգեն հետազոտություններ
- ֆտորիդով մշակում
- ատամների հերմետիկներ

Լրացուցիչ ծառայություններ 21 տարեկանից փոքր անդամների համար

21 տարեկանից փոքր անդամները կարող են լրացուցիչ ատամնաբուժական ծառայություններ ստանալ վաղ և պարբերական զննման, ախտորոշման և բուժման (EPSDT) նպաստի միջոցով:

Դիտեք ձեր բոլոր նպաստները

Սկանավորեք QR կոդը կամ այցելեք bit.ly/ca-benefits՝ ձեր ապահովագրված ատամնաբուժական նպաստների մասին ավելին իմանալու համար:

24/7 շտապ ատամնաբուժական օգնություն

Օգնության կարիք ունե՞ք ատամնաբուժական արտակարգ իրավիճակի դեպքում: Շուրջօրյա խոսեք ատամնաբուժական ծառայություններ մատուցողի հետ: Մուտք գործեք առցանց կամ զանգահարեք ստորև նշված համարով:

Հեռավար ատամնաբուժություն

Հեռախոս՝ (866) 302-0905 կամ սկանավորեք QR կոդը կամ այցելեք bit.ly/ca-teledentist հասցեով:

Հասանելի աջակցության ծառայություններ

- Կազմակերպեք ատամնաբույժի ընդունելությանը գնալու և վերադառնալու փոխադրումը:
- Ստացեք թարգմանչի անվճար ծառայություններ, ներառյալ ժեստերի լեզվով աջակցությունը:
- Ստացեք նյութերը ձեր նախընտրած լեզվով կամ մատչելի ձևաչափերով, օրինակ՝ խոշոր տառաչափով կամ աուդիո ձևաչափով:

ՀԱՐՑԵՐ ՈՒՆԵ՞Ք:

Անդամների սպասարկման բաժինը կարող է պատասխանել ձեր ատամնաբուժական նպաստների վերաբերյալ հարցերին և օգնել ձեզ ստանալ ապահովագրված ծառայությունները:

Լոս Անջելեսի շրջան
855-388-6257

Սակրամենտոյի շրջան
833-479-1984

TTY
800-466-7566 կամ 711

DentaQuest®
Benefits provided by California Dental Network

Ատամնաբուժական նպաստները տրամադրում է California Dental Network-ը: California Dental Network-ը գործունեություն է ծավալում DentaQuest անվամբ: Այս փաստաթղթում California Dental Network-ը հիշատակվում է որպես DentaQuest:

DQ4210 (7.26) ARM